# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Ք. Մեղրի, Զորավար Անդրանիկի 2
Հեռախոս (0286)4-34-23

Թիվ 171
*14 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թ.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հակոբյան,

Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 10-ը փետրվարի 2017 թվականի N6-Ա, N7-Ա, N8-Ա, N9-Ա, N10-Ա, N11-Ա, N12-Ն, N13-Ն որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

*Կատ՝ Լ. Մեժիումյան*

ՀՀ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԲԱՐՁՐԱԴԱՏԱՐԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ՄՈՒՏՔ N 7792
«20» 02 2017թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 փետրվարի 2017 թվական N13 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի N38-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ) ենթակետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

**որոշում է՝**

ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի կողմից 2017 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N38-Ն որոշումը:

| Կողմ (11) | Դեմ(0) | Ձեռնպահ(0) |
|---|---|---|
| ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ | | |
| ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ | | |
| ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | | |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ | | |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ | | |
| ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ | | |
| ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ | | |
| ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ | | |
| ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ | | |
| ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ | | |
| ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2017թ. փետրվարի 10
ք. Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 փետրվարի 2017 թվական N12 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի N37-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 106-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածի առաջին մասի 18-րդ, 19-րդ կետերով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 70-րդ հոդվածների դրույթներով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին՝

**որոշում է՝**

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում 2017 թվականի օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N37-Ն որոշման 1-4 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն 1-4 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (11) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2017թ. փետրվարի 10
ք. Մեղրի

*Հավելված 1*
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու
2017թ փետրվարի 10-ի N12-Ն որոշման
*Հավելված 1*
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու
2016թ դեկտեմբերի .8 -ի N 37-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ տեսակները՝

1. Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների, ոչ հիմնական շինությունների շինարարության, (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.
2. համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի, շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.
3. համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի) թույտվության համար.
4. համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար.
5. համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար.
6. համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար.
7. համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար.
8. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար.
9. համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար.
10. համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար.
11. քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված կարգին համապատասխան տնային կենդանիներ պահելու թույլտվության համար.
12. ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար.
13. Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների խորհրդանիշները (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու համար, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու համար.
14. համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար.
15. համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՉԱՔԱՐՅԱՆ

*Հավելված 2*
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու
2017թ. փետրվարի 10-ի N12-Ն որոշման
*Հավելված 2*
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու
2016թ. դեկտեմբերի 8-ի N 37-Ն որոշման

# ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

***հիմնական շենքերի և շինությունների համար՝***

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ.

2) Սույն կետի «1)» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երեսուն հազար դրամ.
բ. 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ.
գ. 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ.
դ. 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հարյուր հազար դրամ:

***ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝***

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երեք հազար դրամ.
4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի, շինությունների, վերակառուցման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ.

2) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «1)» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի «1.» կետով սահմանված նորմերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի «1.» կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է հինգ հազար դրամ:
4. Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը օրացույցային տարվա համար սահմանվում է երկու հարյուր հազար դրամ.
5. Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը օրացույցային տարվա համար սահմանվում է վաթսուն հազար դրամ.
6. Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը օրացույցային տարվա սահմանվում է հիսուն հազար դրամ:
7. Համայնքի վարչական տարածքում տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

1)ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ութ հազար դրամ.

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազարդրամ.

գ) 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազարդրամ.

դ) 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազարդրամ.

ե) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ

հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուն հազարդրամ.
զ) 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հիսուն հազար դրամ.

2)ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար դրամ.
բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներկու հազարդրամ.
գ) 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհինգ հազարդրամ.
դ) 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազարդրամ.
ե) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասուն հազարդրամ.
զ) 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հիսուն հազար դրամ:

8. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, տեղական տուրքը յուրաքանչյուր օրվա համար սահմանվում է՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.
9. Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին բաղնիքներին (սաունաներին), ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը օրացույցային տարվա համար սահմանվում է՝
   1) առևտրի օբյեկտների համար՝ քառասուն հազար դրամ.
   2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ վաթսուն հազար դրամ
   3) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ.
   4) խաղատների կազմակերպման համար՝ յոթ հարյուր հազար դրամ.
   5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երեք հարյուր հիսուն հազար դրամ.
   6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ հարյուր հիսուն հազար դրամ.
10. համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

**<u>հիմնական շինությունների ներսում՝</u>**

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ.

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ.
գ) 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասներկու հազար դրամ.
դ) 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝տասնվեց հազար դրամ.
ե) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանմեկ հազար դրամ.
զ) 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսունմեկ հազար դրամ.

**<u>ոչ հիմնական շինությունների ներսում՝</u>**

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար դրամ.
բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ.
գ) 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.
դ) 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար հինգ հարյուր դրամ.
ե) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար ՝ ութ հազար հինգ հարյուր դրամ.
զ) 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնվեց հազար դրամ:

***Մեղրի համայնքի Լիճք, Տաշտուն, Վարդանիձոր, Կուրիս, Գուդեմնիս, Վահրավար, Ալվանք, Շվանիձոր, Նռնաձոր, Այգեձոր և Թխկուտ, Կարճևան բնակավայրերում ոգելից և ալկոհոլային խմիչքների և կամ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար տեղական տուրք վճարողների համար սահմանել արտոնություն՝ վճարման ենթակա տուրքի մինչև 95%-ի չափով:***

11. Համայնքի քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված կարգին համապատասխան տնային կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը օրացույցային տարվա համար սահմանվում է՝ հինգ հազար դրամ:
12. Ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ տեղական տուրքը սահմանվում է՝
    1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ.
    2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ.
    3) այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ.
    4) Սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ:
    5) Դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով՝ երեք հարյուր յոթանասունհինգ դրամ.

6) Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ը՝ մեկ հարյուր հիսուն դրամ:

13. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի անվանումը որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը օրացույցային տարվա համար սահմանվում է՝ հարյուր հազար դրամ:

14. Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը օրացույցային տարվա համար յուրաքանչյուր մեքենայի համար սահմանվում է՝ տասը հազար դրամ:

15.Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հինգ հարյուր հազար դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՉԱՔԱՐՅԱՆ

*Հավելված 3*
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու
2017թ.փետրվարի 10-ի N12-Ն որոշման
*Հավելված 3*
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու
2016թ.դեկտեմբերի 8-ի N37-Ն որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում սահմանվում է տեղական վճարների հետևյալ տեսակները՝

1. համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար.
2. ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարություն թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար.
3. ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար.
4. համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար.
5. համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար.
6. համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար.
7. համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին՝ շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար.
8. համայնքային ենթակայության մանկապարտեզների ծառայությունից օգտվողների համար.
9. համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայությունից օգտվողների համար.
10. համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար.
11. համայնքի վարչական տարածքում տեղակայված անշարժ գույքի համարակալման և հասցեավորման համար.
12. համայնքի վարչական տարածքում ասֆալտապորտային ծառայության՝ վճարովի ուղևորափոխադրումների համար.
13. համայնքի տարածքում տարբեր միջոցառումների կազմակերպման նպատակով համայնքային սեփականության հանդիսացող մշակույթի տների, դահլիճների, ակումբների տրամադրման համար.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՉԱՔԱՐՅԱՆ

*Հավելված 4*
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու
2017թ.փետրվարի 10-ի N 12-Ն որոշման
*Հավելված 4*
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու
2016թ.դեկտեմբերի 8-ի N 37-Ն որոշման

# ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
# 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ

1. համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սամանվում է՝ քսան հազար դրամ:
2. ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարություն թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է՝ քսանհինգ հազար դրամ:
3. ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է՝ քսանհինգ հազար դրամ:
4. համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է՝ քսան հազար դրամ:
5. համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է՝ տասը հազար դրամ:
6. համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է՝ յուրաքանչյուր բնակչի համար ամսական՝ չորս հարյուր դրամ:

Սահմանվում է արտոնություն աղբահանության վճար վճարողների համար.
Ագարակ և Մեղրի քաղաքներում հաշվառում ունեցող և բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝37.5%-ի չափով (150 դրամ), համայնքի գյուղերում հաշվառում ունեցող և բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ 62,5%-ի չափով (250դրամ):

7. համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվության համար վճար սահմանվում է՝ երեք հազար դրամ՝ մեկ խորանարդ մետրի համար:

Աղբահանության վճար վճարողներին՝ շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար վճար սահմանվում է՝ հինգ հարյուր դրամ՝ մեկ խորանարդ մետրի համար:

8. համայնքային ենթակայության մանկապարտեզների ծառայությունից օգտվող մեկ երեխայի համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է մեկ ուսումնական տարվա համար՝ հիսուն հազար դրամ:
9. «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի և «Մեղրիի արվեստի մանկական դպրոց» ՀՈԱԿ-ի ծառայությունից օգտվող մեկ անձի համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար

սահմանվում է՝ մեկ ուսումնական տարվա համար՝ քսանյոթ հազար դրամ, բացառությամբ պարային բաժնի, որի համար սահմանվում է՝ երեսունվեց հազար դրամ:

10. համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար փոխհատուցման վճար մեկ փաստաթղթի համար սահմանվում է՝ հազար դրամ:

11. համայնքի վարչական տարածքում տեղակայված անշարժ գույքի համարակալման և հասցեավորման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար ըստ գույքի տեսակի սահմանվում է՝

1)ֆիզիկական անձանց սեփականություն համարվող հողամասերի, բազմաբնակարան շենքերի բնակարանների ու բնակելի տների համար՝ Ագարակ և Մեղրի քաղաքներում հինգ հազար դրամ, Լեհվազ և Կարճևան գյուղերում՝ հազար դրամ, Մեղրի համայնքի մնացած գյուղական բնակավայրերում՝ հինգ հարյուր դրամ.

2) ֆիզիկական անձանց սեփականություն համարվող ոչ բնակելի շինությունների համար՝ Ագարակ և Մեղրի քաղաքներում տասնհինգ հազար դրամ, Լեհվազ և Կարճևան գյուղերում՝ հազար դրամ, Մեղրի համայնքի մնացած գյուղական բնակավայրերում՝ հինգ հարյուր դրամ.

3) իրավաբանական անձանց սեփականություն համարվող անշարժ գույքի համար՝ քսան հազար դրամ:

12.Մեղրի համայնքի տարածքում տրանսպորտային ծառայությունից (վճարովի ուղևորափոխադրումներ) օգտվող մեկ ուղևորի համար համայնքի կողմից մատուցվող ծառայության դիմաց փոխհատուցման վճար ըստ երթուղիների սահմանվում է՝

1) Ագարակ-Մեղրի (հետադարձը՝ նույն ուղեգծով)՝ հարյուր դրամ
2) Ագարակ-Տաշտուն՝ (հետադարձը՝ նույն ուղեգծով)՝ երկու հարյուր դրամ
3) Ագարակ-Լիճք՝ (հետադարձը՝ նույն ուղեգծով)՝ երկու հարյուր դրամ
4) Ագարակ-Վարդանիձոր՝ (հետադարձը՝նույնուղեգծով)՝ երկու հարյուր դրամ
5) Ագարակ-Կարճևան՝(հետադարձը՝նույնուղեգծով) ՝ հարյուր դրամ
6) Ագարակ-Ալվանք՝(հետադարձը՝նույնուղեգծով)՝ երկու հարյուր դրամ
7) Ագարակ- Շվանիձոր՝ (հետադարձը՝նույնուղեգծով)՝ երկու հարյուր դրամ
8)Ագարակ- Նոնաձոր՝ (հետադարձը՝նույնուղեգծով)՝ երկու հարյուր դրամ
9) Ագարակ-Լեհվազ՝(հետադարձը՝նույնուղեգծով)՝ երկու հարյուր դրամ
10)Մեղրի-Լեհվազ՝ (հետադարձը՝նույնուղեգծով)՝ հարյուր դրամ

13.համայնքի տարածքում տարբեր միջոցառումների կազմակերպման նպատակով համայնքային սեփականություն համարվող մշակույթի տների, դահլիճների, ակումբների տրամադրման դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է՝

1) Ագարակի մշակույթի պալատի և Մեղրու մշակույթի տան դահլիճների տրամադրման դիմաց՝ բարեգործական միջոցառումների անցկացման համար զրո դրամ, այլ միջոցառումների անցկացման համար 1 օրը՝ 30000 - 60000 դրամ: Մեղրի և Ագարակ քաղաքներում գտնվող մյուս դահլիճների տրամադրման դիմաց՝ բարեգործական միջոցառումների համար՝ զրո դրամ, այլ միջոցառումների անցկացման համար 1 օրը՝ քսան հազար դրամ:

2)Գյուղական բնակավայրերի ակումբների դահլիճների տրամադրման դիմաց՝ բարեգործական միջոցառումների անցկացման համար զրո դրամ, այլ միջոցառումների համար մեկ օրը՝ հինգ հազար դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՉԱՔԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 փետրվարի 2017 թվական N11 –Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով և 8-րդ մասի 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^3$ հոդվածի 5-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշումը, հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N115 եզրակացությունը, համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վահրավար, Լիճք և Կարճևան վարչական տարածքներում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող հատուկ պահպանվող տարածքների բնապահպանական հողամասեր նպատակային նշանակության հողամասերից /Արևիկ ազգային պարկ/՝ 0.13305 հեկտար /3 միավոր հողամաս/, համայնքային սեփականություն հանդիսացող ջրային նպատակային նշանակության հողերից 0.53726 հեկտար և գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերից 1.51668 հեկտար մակերեսներով հողամասերը (համաձայն հավելվածի) փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ «կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր» գործառնական նշանակությամբ՝ ջրատնտեսական օբյեկտների /ՕԿՋ-ներ, ջրընդունիչներ/ շահագործման համար:

2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (11) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2017թ. փետրվարի 10
ք. Մեղրի

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017թ.
ՓԵՏՐՎԱՐԻ 10 -Ի N 11-Ա ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՏԱԿԱԳԻԾ

էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի շարքը փոխադրվող 2.18699 հա տարածքի

ջրային -0.53726 հա
գյուղատնտեսական -1.51668 հա

| Գագաթի համարը (նկարագրությունը) | Կոորդինատները | | Գծային չափերը (մետր) |
|---|---|---|---|
| | Y | X | |
| 1 | 8602304.4804 | 4309282.4183 | 38.23 |
| 2 | 8602272.0110 | 4309302.5971 | 41.86 |
| 3 | 8602248.3721 | 4309337.1446 | 129.70 |
| 4 | 8602187.8914 | 4309451.8760 | 46.49 |
| 5 | 8602220.0719 | 4309485.4327 | 35.17 |
| 6 | 8602253.2586 | 4309497.0675 | 83.48 |
| 7 | 8602319.0525 | 4309445.6913 | 67.96 |
| 8 | 8602350.0696 | 4309385.2210 | 34.62 |
| 9 | 8602355.2861 | 4309350.9974 | 36.85 |
| 10 | 8602340.3635 | 4309317.3013 | 50.04 |
| 1 | 8602304.4804 | 4309282.4183 | |

հատուկ պահպանվող -0,04036 հա

| Կետի հ/հ | Y | X | Հեռավորություն (մետր) |
|---|---|---|---|
| 1 | 8599704.3553 | 4315014.2191 | 15.45 |
| 2 | 8599704.2694 | 4315029.6670 | 20.05 |
| 3 | 8599724.3196 | 4315029.8757 | 8.10 |
| 4 | 8599731.5522 | 4315026.2259 | 9.60 |
| 5 | 8599731.2712 | 4315016.6277 | 7.18 |
| 6 | 8599724.5731 | 4315014.0319 | 20.22 |
| 1 | 8599704.3553 | 4315014.2191 | |

հատուկ պահպանվող -0,05106 հա

| Կետի հ/հ | Y | X | Հեռավորություն (մետր) |
|---|---|---|---|
| 1 | 8597258.5794 | 4317959.6016 | 18.24 |
| 2 | 8597259.1133 | 4317977.8339 | 20.07 |
| 3 | 8597279.1783 | 4317977.7254 | 7.50 |
| 4 | 8597286.6020 | 4317976.6582 | 15.63 |
| 5 | 8597286.1444 | 4317961.0304 | 13.75 |
| 6 | 8597272.7687 | 4317957.8441 | 14.30 |
| 1 | 8597258.5794 | 4317959.6016 | |

հատուկ պահպանվող -0,04163 հա

| Կետի հ/հ | Y | X | Հեռավորություն (մետր) |
|---|---|---|---|
| 1 | 8596093.4638 | 4322896.4463 | 15.56 |
| 2 | 8596079.9137 | 4322904.0945 | 12.62 |
| 3 | 8596072.0362 | 4322913.9532 | 13.66 |
| 4 | 8596081.7639 | 4322923.5498 | 13.52 |
| 5 | 8596093.2311 | 4322916.3965 | 14.67 |
| 6 | 8596101.2102 | 4322904.0885 | 10.88 |
| 1 | 8596093.4638 | 4322896.4463 | |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 փետրվարի 2017 թվական N10 –Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ և 2-րդ պարբերության 3)-րդ կետով, 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286-Ն,<< Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 8-ի N39-Ն որոշումներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի Սահմանամերձ փողոցի թիվ 18 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության կատեգորիայի պահեստարաններ գործառնական նշանակության 09-002-0064-0091 կադաստրային ծածկագրով (սեփականության իրավունքի վկայական N 10112014-09-0005) 0,11021 հա հողամասը պահեստարան կառուցելու նպատակով աճուրդային կարգով օտարել՝ մեկնարկային գին սահմանելով 661260 (վեց հարյուր վաթսունմեկ հազար երկու հարյուր վաթսուն) << դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի Սահմանամերձ փողոցի թիվ 26 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության կատեգորիայի պահեստարաններ գործառնական նշանակության 09-002-0064-0107 կադաստրային ծածկագրով (սեփականության իրավունքի վկայական N 16122016-09-0021) 0,2355 հա հողամասը պահեստարան կառուցելու նպատակով աճուրդային կարգով օտարել՝ մեկնարկային գին սահմանելով 1413000 (մեկ միլիոն չորս հարյուր տասներեք հազար) << դրամ:

3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի Սահմանամերձ փողոցի թիվ 28 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության կատեգորիայի պահեստարաններ գործառնական նշանակության 09-002-0064-0106 կադաստրային ծածկագրով (սեփականության իրավունքի վկայական N 16122016-09-0023) 0,2676 հա հողամասը պահեստարան կառուցելու նպատակով

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 փետրվարի 2017 թվական N9 –Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱՆԻՁՈՐ ԳՅՈՒՂԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի և 8-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշման, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վարդանիձոր գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություն կատարելուն, ըստ որի առաջարկվում է Մեղրի համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերից 0,10831 հեկտար (սեփականության իրավունքի վկայական N25012017-09-0001, ծածկագիր՝ 09-092-0313-0006) փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա «հասարակական կառուցապատման» գործառնական նշանակության՝ մանկապարտեզի շենք կառուցելու համար:
2.Համայնքի ղեկավարին՝ համապատասխան եզրակացություն ստանալու համար օրենսդրությամբ սահմանված կարգով կազմել հողաշինարարական գործ և ներկայացնել Հայաստանի ՀանրապետությանՍյունիքիմարզպետին:

Կողմ (11) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՁԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ

2017թ. փետրվարի 10
ք. Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 փետրվարի 2017 թվական N8 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԻՃՔ ԳՅՈՒՂԻ ՊՂՆՁԱՔԱՐԻ ԹԻՎ 1,4, ՊՂՆՁԱՔԱՐԻ ԹԻՎ 2 և ՊՂՆՁԱՔԱՐԻ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները հաստատելու մասին» N 1746-Ն որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լիճք գյուղի Պղնձաքարի թիվ 1,4, հասցեում գտնվող 99,4275հա (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N090122017-09-0013), Պղնձաքարի թիվ 2 հասցեում գտնվող 34,321հա (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N22092016-09-0038) և Պղնձաքարի թիվ 3 հասցեում գտնվող 17,5912հա (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 15092016-09-0029), պետական սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ «ընդերքի օգտագործման համար տրամադրված հողմասեր» գործառնական նշանակության՝ ընդհանուր 151,3397հա մակերեսով (3 միավոր) հողամասերի վարձակալության տարեկան վարձավճարները սահմանել համապատասխանաբար՝ 12 348 896 դրամ, 4 262 668 դրամ և 2 184 827 դրամ, ընդամենը՝ 18 796 391 (տասնութ միլիոն յոթ հարյուր իննսունվեց հազար երեք հարյուր իննսունմեկ) ՀՀ դրամ (1 հեկտարի համար՝ 124 200 ՀՀ դրամ):

2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (11) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՁԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ

2017թ. փետրվարի 10
ք. Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 փետրվարի 2017 թվական N7 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵՎ ՈՐՊԵՍ «ԱՆՀԱՅՏ» ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին» N186-Ն հրամանի 9-րդ կետի 5-րդ ենթակետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄԷ

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Փարամազ փողոցում գտնվող՝ որպես «անհայտ» քաղաքացիների սեփականություն փոխանցված 09-005-027-001 ծածկագրից առանձնացված 0,001982 հա բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, որի նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ, ճանաչել համայնքային սեփականություն՝ հողամասի հետ կապված անճշտության ուղղման նպատակով:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (11) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2017թ. փետրվարի 10
ք. Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 փետրվարի 2017 թվական N6 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N3 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 16-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 10-ի N3 նիստի օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում գտնվող և որպես «անհայտ» քաղաքացիների սեփականություն փոխանցված հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքիԼիճք գյուղի Պղնձաքարի թիվ 1,4, Պղնձաքարի թիվ 2 և Պղնձաքարի թիվ 3 հասցեներում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության տարեկան վարձավճարը սահմանելու մասին:

3.Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վարդանիձոր բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում նախատեսվող փոփոխությունը քննարկելու մասին:

4.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարելու մասին:

5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքի հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

6.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 8-ի N37-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

7.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 8-ի N38-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Կողմ (11) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՁԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ

2017թ. փետրվարի 10
ք. Մեղրի